

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱ» ՈՒՈՐՏԸ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ՝
ԱՐՏԱՑՈՂՎԱԾ ՀԸԳՀ-ՈՒՄ ԵՎ ՀՀ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Սույն փաստաթուղթը մշակվել է «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից «Էներգետիկ պարադիգմի փոփոխություն. Հարավային Կովկասի երկրներում կանաչ անցման նոր մարտահրավերների և խնդիրների հասցեագրում» ծրագրի շրջանակներում՝ Brot für die Welt բողոքական զարգացման ծառայության աջակցությամբ: Սույն փաստաթղթում արտահայտված տեսակետները բացառապես հեղինակներինն են:

Բովանդակություն

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ-----	3
2.«ԷՆԵՐԳԵՏԻԿԱ» ՈԼՈՐՏԸ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ԱՐՏԱՅՈԼՎԱԾ ՀՐԳՀ-ՈՒՄ և ՀՀ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ-----	4
3.«ԷՆԵՐԳԵՏԻԿԱ» ՈԼՈՐՏԸ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀՀ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ-----	5
-Հայկական ատոմային էլեկտրակայան-----	6
-Վերականգնվող էներգետիկա-----	6
-Բնական գազ-----	9

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԷԿ – ատոմային էլեկտրակայան

ԱՄ – առանց միջոցառումների

ԱՍԳ – ազգային սահմանված գործողություններ

ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն

ԿՓ – կլիմայի փոփոխություն

ՀԷԿ – հիդրոէլեկտրակայան

ՀԸԳՀ – Հայաստանի Հանրապետության՝ մի կողմից, և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների՝ մյուս կողմից, միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր

ԶԳ – ջերմոցային գազ

ԶԳ-ՑԱԶԵՌ – Ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարություն

«Մ» – միջոցառումներ

«ԼՄ» – լրացուցիչ միջոցառումներ

ՓԲԸ – փակ բաժնետիրական ընկերություն

ՄՎտ – մեգավատտ

ԳԳ – գեգատոննա

CO₂ – ածխածնի երկօքսիդ

1. «Էներգետիկա» ոլորտը կլիմայի փոփոխության համատեքստում արտացոլված ՀԸԳՀ-ում և ՀՀ կլիմայական քաղաքականությունում

ՀԸԳՀ-ի 51-56 հոդվածները վերաբերում են կլիմայի փոփոխությանը: Մասնավորապես, 52-րդ հոդվածը վերաբերում է ԿՓ ոլորտում համագործակցությանը «a» ԿՓ մեղմման և «b» ԿՓ հարմարվողականության կետերով:

Հոդվածի կատարումը նախատեսված է ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզի 121 և 130-րդ միջոցառումներով: Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել է «Էներգետիկա» ոլորտը կլիմայի փոփոխության համատեքստում արտացոլված ՀԸԳՀ-ում¹ և ՀՀ կլիմայական քաղաքականությունում: Այս ոլորտը դիտարկվել է ՀԸԳՀ կիրարկման ճանապարհային քարտեզի² 130-րդ միջոցառման շրջանակներում, որով նախատեսվում է ԿՓ նկատմամբ հարմարվողականության հայեցակարգի ու ազգային գործողությունների ծրագրի մշակում՝ ուղղված գյուղատնտեսական, տնտեսական և կլիմայի վրա հնարավոր ազդեցություն ունեցող այլ ոլորտներում կլիմայական փոփոխությունների մեղմացման, նվազեցման և կանխարգելման պահանջներին և միջոցառումներին համահունչ գործունեության պլանավորմանը և իրականացմանը:

Միջոցառման շրջանակներում «Էներգետիկա» ոլորտի վերաբերյալ ընդունվել են հետևյալ փաստաթղթերը.

- «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 749-Լ որոշում³: Որոշման միջոցառումների ծրագրով նախատեսվել է «Էներգետիկա» ոլորտի հարմարվողականության ծրագրի մշակում, ինչը չի արվել: Որոշվել է հարմարվողականության միջոցառումները ներառել ոլորտի նախատեսվող ռազմավարության մեջ:
- «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի թիվ 398 որոշում⁴:
- «Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ցածր արտանետումներով զարգացման երկարաժամկետ ռազմավարությունը (մինչև 2050 թվական) հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2318-Լ որոշում⁵:

¹ https://www.mfa.am/filemanager/eu/CEPA_ARM_1.pdf

² <https://www.arlis.am/hy/acts/153164>

³ <https://www.arlis.am/hy/acts/152612>

⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=161408>

⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188021>

2. «Էներգետիկա» ոլորտը կլիմայի փոփոխության ՀՀ քաղաքականության համատեքստում

«Էներգետիկա» ոլորտը Հայաստանում ջերմոցային գազերի արտանետումների ամենամեծ աղբյուրն է և, համաձայն ՋԳ արտանետումների վերջին գույքագրման, այս ոլորտին բաժին է ընկել դրանց 64%-ը:

ԿՓ վերաբերյալ օրենսդրական փաստաթղթերում այս ոլորտը կարևորվում է ինչպես ԿՓ հարմարվողականության, այնպես էլ ԿՓ մեղմման տեսանկյունից:

Ըստ Հայաստանի ԱՍԳ-ի՝ վերականգնվող էներգետիկայի մասնաբաժինը ընդհանուր էներգետիկ հաշվեկշռում նախատեսվում է կրկնապատկել մինչև 2030 թվականը:

«Էներգետիկա» ոլորտում ԿՓ մեղմման միջոցառումներն արտացոլված են ՋԳ-ՑԱԶԵՌ փաստաթղթում: Համապատասխանաբար, «Էներգետիկա» ոլորտում ՋԳ արտանետումների կրճատումը նախատեսվում է իրականացնել վերականգնվող և միջուկային էներգետիկայի նոր հզորությունների շահագործման միջոցով:

Ռազմավարության «Մ» և «ԼՄ» սցենարներով արևային էներգիայի նպատակային հզորությունը նախատեսվում է ավելացնել 1500 ՄՎտ-ով մինչև 2050 թ., որի արդյունքում երկու սցենարներով էլ ՋԳ արտանետումները 2023-2050 թթ. ընթացքում գումարային կնվազեն 26105 ԳգCO₂ համ. չափով:

Նախատեսվում է ավարտել ատոմակայանի շինարարությունը մինչև 2036 թ. և սկսել վերջինիս շահագործումը: Ենթադրվում է, որ այն թույլ կտա 2050 թ-ին ՋԳ արտանետումները նվազեցնել մինչև 3675 ԳգCO₂ համ. չափով կամ ընդհանուր առմամբ 15 տարվա ընթացքում՝ 41416 ԳգCO₂ համ. չափով:

«ԼՄ» սցենարով ենթադրվում է հողմային և հիդրո- էներգիայի հզորությունների գործարկում: Ենթադրվում է, որ հողմային էներգիայի հզորություններն աճելու են սկսած 2031 թ.՝ 2040 թ. հասնելով 500 ՄՎտ-ի (պահպանելով հզորությունը մինչև 2050 թ.): Արդյունքում, ՋԳ արտանետումների գումարային նվազումը 2031-2050 թթ. համար կազմելու է 10360 ԳգCO₂ համ. չափով: Փոքր հիդրոէլեկտրակայանների դրվածքային հզորությունը նախատեսվել է 380 ՄՎտ-ից հասցնել 430 ՄՎտ մինչև 2040 թ.: Բացի այդ, այս սցենարով դիտարկվում է նաև երեք ՀԷԿ-երի կառուցումը 2040-2050 թթ. ընթացքում՝ 241 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: Նշված միջոցառումների արդյունքում, հիդրոէլեկտրաէներգիայի ոլորտում նախատեսվում է ՋԳ արտանետումները գումարային կրճատել 2425 ԳգCO₂ համ. չափով՝ 2031-2050 թթ. ընթացքում:

Ըստ գազի փախուստային արտանետումները նույնպես կկրճատվեն, հիմք ընդունելով համակարգի կորուստների կրճատման ընդունված թիրախները և երկրի էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում բնական գազի մասնաբաժնի ակնկալվող նվազումը՝ այլընտրանքային էներգիայի աղբյուրների ներդրման արդյունքում: Փախուստային արտանետումների արժեքները 2050 թվականին կազմելու են. «ԱՄ» սցենարով՝ 6567 ԳգCO₂ համ., «Մ» սցենարով՝ 1563 ԳգCO₂ համ., իսկ «ԼՄ» սցենարով՝ 980 ԳգCO₂ համ.:

2.1 Հայկական ատոմային էլեկտրակայան

Հայկական ԱԷԿ-ի առաջին էներգաբլոկը շահագործման է հանձնվել 1976 թվականի դեկտեմբերի 22-ին, երկրորդը՝ 1980 թվականի հունվարի 5-ին: Հայկական ԱԷԿ-ի ընդհանուր դրվածքային էլեկտրական հզորությունը կազմել է 815 ՄՎտ (յուրաքանչյուր էներգաբլոկի դրվածքային էլեկտրական հզորությունը՝ 407,5 ՄՎտ): Էներգաբլոկների շահագործման նախագծային ժամկետը 30 տարի է⁶:

ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի՝ Հայկական ԱԷԿ-ի կանգի վերաբերյալ որոշման ընդունման հարցում. N-1 էներգաբլոկը կանգնեցվեց 1989 թվականի փետրվարի 25-ին, N-2 էներգաբլոկը կանգնեցվեց 1989 թվականի մարտի 18-ին:

1993 թվականի ապրիլի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում ընդունեց վերագործարկել Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը: 1995 թվականի նոյեմբերի 5-ին Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկը կրկին գործարկվեց և միացվեց Հայաստանի Հանրապետության էներգահամակարգին՝ ռեակտորի մինչև 92% թույլատրելի ջերմային հզորությամբ:

Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի առաջին երկարացման աշխատանքների արդյունքում, Հայկական ԱԷԿ-ի N-2 էներգաբլոկի շահագործման լիցենզիայի ժամկետը երկարացվեց մինչև 2031 թվական՝ մինչև 2026 թվականի սեպտեմբեր հզորությամբ աշխատելու թույլտվությամբ:

2023 թ. սեպտեմբերի 14-ի ՀՀ կառավարությունը ընդունեց «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետը երկարացնելու (ՇԺԵ-2) ծրագիրը և «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության N-2 էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարացման (ՇԺԵ-2) ծրագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման և կատարման պլանը հաստատելու մասին» N 1597 – Ա որոշումը,⁷ որով ևս մեկ անգամ երկարաձգվեց ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետը մինչև 2036թ.:

2036թ. նախատեսվում է ավարտել նոր ատոմակայանի շինարարությունը և սկսել վերջինիս շահագործումը:

Ըստ ՀԾԿՀ-ի հաշվետվության՝⁸ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ատոմային էլեկտրակայանը 2023թ-ի համեմատ 4,7%-ով ավելի շատ էլեկտրաէներգիա է առաքել 2024թ.: 2023թ. առաքված էլեկտրաէներգիան կազմել է 2512.0 մլն կՎտժ, իսկ 2024թ.՝ 2629.13 մլն կՎտժ:

2.2 Վերականգնվող էներգետիկա

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործել են՝

⁶ <https://armeniannpp.am/hy/about-us/history.html>

⁷ <https://www.e-gov.am/gov-decrees/item/41223/>

⁸ <https://psrc.am/uploads/files/%D5%8F%D5%A1%D6%80%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%A1%D5%B7%D5%BE%D5%A5%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2025/Ardir.pdf>

- 191 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 16-ը գտնվել են կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 402 ՄՎտ, իսկ կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններինը՝ շուրջ 65 ՄՎտ: Ըստ այդմ, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 207 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ 467 ՄՎտ գումարային հզորությամբ:
- 72 արևային էլեկտրակայաններ, ևս 47-ը գտնվել են կառուցման փուլում (ներառյալ 55 ՄՎտ հզորությամբ «Մասրիկ-1» արևային կայանը): Գործող արևային էլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 279 ՄՎտ, իսկ կառուցվող արևային էլեկտրակայաններինը՝ շուրջ 298 ՄՎտ: Ըստ այդմ, կառուցվող էլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 119 արևային էլեկտրակայաններ՝ 577 ՄՎտ գումարային հզորությամբ: 2025թ. «Մասրիկ 1» արևային կայանը մտել է շահագործման փուլ:

ՀՀ-ում գործում է արևային էներգիայի բիզնեսով զբաղվում է 71 ընկերություն: 2025 թվականի մայիսի 1-ի դրությամբ բաշխման ցանցին միացված ինքնավար էներգաարտադրողների քանակը կազմել է 37465, 485,492 ՄՎտ հզորությամբ: Կառուցման փուլում են 518-ը՝ 311,16 ՄՎտ ընդհանուր հզորությամբ⁹:

ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի N 239 – Լ որոշմամբ¹⁰ Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի ավարտը սահմանվել է 2025թ-ի հուլիսի 1-ը: Ծրագրով պետական սուբսիդավորում էր նախատեսված ոչ միայն բնակարանի էներգաարդյունավետ վերանորոգման, այլև էներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործման՝ արևային ինքնավար կայանների, ջրատաքացուցիչների տեղադրման համար: Արևային ոլորտի առաջատար ընկերությունների ղեկավարները համարում են, որ ծրագրի ավարտը կարող է խնդիրներ առաջացնել արևային էներգետիկայի ոլորտի զարգացման համար: Նրանք ահազանգում են, որ սուբսիդավորման ծրագրի ավարտից հետո արևային ընկերությունների մեծ մասը կհայտնվի փակման վտանգի առջև, մի մասն էլ կմտածի պրոֆիլը փոխելու մասին:

Ոլորտի խնդիրներից է համակարգի գերժանրաբեռնվածությունը, հնարավոր վթարները, հոսանքի անջատումները և կուտակիչների բացակայությունը, էլեկտրոնային թափոնների խնդրի չկարգավորումը, գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործումը:

Կառուցման փուլում է Հայաստանի ամենամեծ՝ 200 ՄՎտ հզորությամբ «Այգ-1» արևային ֆոտովոլտային կայանը: «Այգ-1»-ի նախագծի համար հատկացվել է 547,3095 հա մակերեսով հողատարածք ՀՀ Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադաղեն բնակավայրերից:

⁹ <https://energyagency.am/category/infografiks/inqnavar-arevayin-kayanner-2025t--mayisi->

¹⁰ <https://e-gov.am/gov-decrees/item/42177/>

Կտեղադրվի 450.000 ֆոտովոլտային վահանակ: Կայանը կգործի 25 տարի: Այդ հողամասերով համալրվել էր «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի (ANIF) կանոնադրական կապիտալը, որն «Այգ-1» ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագիրն իրականացնող «Մասդար Արմենիա» ընկերությունում ուներ 15% բաժնեմասնակցություն: Բաժնետոմսերի 85%-ը պատկանում է «Մասդար» ընկերությանը: Ծրագրի ընդհանուր ներդրումային արժեքը 200 միլիոն ԱՄՆ դոլար է: Դաշտադեմ բնակավայրից վերցված 377.4495 հեկտար հողատարածքի շուկայական արժեքի մոտարկված կադաստրային արժեքը 822 միլիոն դրամ է՝ ըստ ՀՀ կառավարության 2021թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1777-Ն որոշման, իսկ Թալին բնակավայրից վերցված 169.8614 հա հողամասերի արժեքը 2 միլիարդ 74 միլիոն 8 հազար դրամ է՝ համաձայն ՀՀ կառավարության 2023թ. հուլիսի 6-ի 1137-Ն որոշման: «Այգ-1» ծրագրի շրջանակներում «Մասդար» ընկերությունը Դաշտադեմ և Թալին համայնքների հետ կնքած նվիրաբերության պայմանագրով պետք է իրականացնեի 320 միլիոն դրամի չափով համայնքային զարգացման վճարում: Այդ գումարով նախատեսված աշխատանքները Թալին համայնքը կատարել է, սակայն գումարը համայնքին չի տրամադրվել:

2024թ. ANIF-ի լուծարումից հետո «Մասդար Հայաստան 1» ՓԲԸ-ի 15 տոկոս բաժնետոմսերը սեփականության իրավունքով ստանալու նպատակով հիմնադրվել է «Արևային էներգետիկայի զարգացման» ՓԲԸ-ն: Կայանի կառուցման ավարտը նախատեսված 2025թ-ի փոխարեն տեղափոխվել է 2027թ.:

- 4 հողմային էլեկտրակայաններ, ևս 1-ը գտնվել է կառուցման փուլում: Գործող հողմային էլեկտրակայանների գումարային հզորությունը կազմել է շուրջ 4.2 ՄՎտ, իսկ կառուցվող հողմային էլեկտրակայանինը՝ 3.9 ՄՎտ:

Վերականգնվող էներգիայի աղբյուրներից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը էներգետիկ հաշվեկշռում 2021-2024 թվականներին՝ ըստ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տվյալների.

Տարի	Մեծ ՀԷԿ-երի, փոքր ՀԷԿ-երի և արևային էլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը, %	Փոքր ՀԷԿ-երի և արևային էլեկտրակայանների կողմից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը, %	Փոքր արևային էլեկտրակայանների (մինչև 30 ՄՎտ) կողմից արտադրված էլեկտրաէներգիայի մասնաբաժինը, %
2021թ.	29,87	8,57	1,17
2022թ.	24,57	11,81	2,71
2023թ.	24,01	12,87	4,52
2024թ.	30,9	19,4	5,3

Եզրակացություն

Եթե այս միտումները շարունակվեն, Հայաստանի կառավարությունը կարող է հասնել 2030 թվականի համար սահմանված էներգետիկ համակարգում վերականգնվող էներգետիկայի մասնաբաժնի կրկնապատկման թիրախին:

2.3 Բնական գազ

Բնական գազը կազմում է Հայաստան մատակարարվող էներգակիրների գրեթե 63 տոկոսը: Ներմուծվում է հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից (ՌԴ) և փոքր քանակությամբ՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից (ԻԻՀ):

Համաշխարհային բանկի խմբի «Հայաստան. «Երկրի կլիմայի և զարգացման զեկույց»-ի¹¹ համաձայն՝ բնական գազի բարձր տեսակարար կշռի պատճառով Հայաստանը համաշխարհային միջինից ցածր մակարդակում է ջերմոցային գազերի (ՋԳ) արտանետումների ցուցանիշով. 2019 թվականին մեկ շնչին բաժին է ընկել 3.8 տոննա ածխաթթու գազի համարժեք (տCO₂համ):

«Սցենարը, որով Հայաստանը դիվերսիֆիկացնում է գազի ներկրումը և վճարում գազի միջազգային գները, կհանգեցնի էլեկտրաէներգետիկական համակարգի ավելի մեծ ծախսի, քան դեկարբոնիզացման սցենարը, երբ Հայաստանը գազով աշխատող տնտեսությունից անցում կկատարի արևային էներգիայով աշխատող տնտեսության և կնվազեցնի արտանետումները՝ մինչև 2050 թ. հասնելով մեկ շնչի հաշվով 2.07 տCO₂համ թիրախին», - նշված է զեկույցում:

2021-2024թթ. ՀՀ ներկրված բնական գազի ցուցիչներ՝ ըստ ՀՄԿՀ-ի¹²

Ցուցիչ, մլն. խմ	2021	2022	2023	2024
Ներկրված գազի քանակը,	2793,8	2971.4	2730.8	2734.8
Գազի կորուստները փոխադրման համակարգում	74,8	82.0	99,5	116.2
Գազի կորուստները բաշխման համակարգում	33,1	35.7	38,3	32,1
Բաշխման համակարգում իրացված գազի ծավալը՝ որից	2300,4	2817.2	2578.5	2573.0
Բնակչություն՝	766,3	812.1	808,2	896.3
Էներգետիկա	503,5	864.9	777,7	732.8
Արդյունաբերություն	254,1	296.7	293,7	273.5
Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ	505,3	504.8	412,1	360,0
Բյուջետային կազմակերպություններ	56.7	54.7	49,9	56,1

¹¹ <https://www.worldbank.org/en/country/armenia/publication/the-country-climate-and-development-report-for-armenia>

¹² https://psrc.am/contents/fields/gas/gas_reports

Այլ սպառողներ	214.5	283.9	237,0	254,2
---------------	-------	-------	-------	-------

Եզրակացություն

Բնական գազի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2021-2024թթ. ընթացքում բնական գազի ներկրման ծավալները էականորեն չեն փոխվել: Ավելացել է բնակչության շրջանում գազի սպառումը, գազի կորուստները փոխադրման համակարգում աճել են, իսկ բաշխման համակարգում 2021-2023թթ. աճել են,

2024թ.՝ նվազել: «Էներգետիկա» և «Արդյունաբերություն» ոլորտներում մինչև 2022թ. ը դիտել է աճ, ապա նվազում: Ավտոգազալիցքավորման ճնշակայաններում դիտվել է գազի սպառման կայուն կրճատում, ինչը պայմանավորված է էլեկտրատրանսպորտի ներկրմամբ, որին նպաստել է ՀՀ կառավարության քաղաքականությունը էլեկտրական շարժիչով տրասնպորտային միջոցների որոշակի խմբաքանակի համար 0 տոկոս ներմուծման մաքսատուրքի դրույքաչափ սահմանելու մասին: 2023-2024 թվականներին Հայաստան է ներմուծվել է 15842 էլեկտրական մեքենա:¹³

Եզրակացություն

ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրի համաձայն՝ կանաչ տնտեսություն ձևավորելու համար անհրաժեշտ միջոցառումներից է լինելու էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում բնական գազի դերը շարունակաբար նվազեցնել փոխարինելով այն վերականգնվող և այլընտրանքային էլեկտրական էներգիայի աղբյուրներով: Իսկ «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրին, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի առաջին փուլի (2022-2024 թվականներ) իրագործումն ապահովող ծրագիր-Ժամանակացույցին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2022 թ. մարտի 24-ի N 398-Լ որոշման մեջ նշվում է, որ, ըստ վերջին կայացած արևային կայանների կառուցման մրցույթների և ինքնավար կայանների արտադրության ցուցանիշների՝ ներքին պահանջարկի բավարարման նպատակով բնական գազի ամբողջական փոխարինումն արևային էներգիայով՝ ներքին պահանջարկի անփոփոխ պայմաններում, կպահանջի վերականգնվող (բացի հիդրոէներգետիկայից) էներգիայով աշխատող 700 ՄՎտ հզորության կայանների կառուցում, հաշվի առնելով, որ 2021թ. առաջին կիսամյակում արդեն իսկ շահագործվում էին շուրջ 150 ՄՎտ հզորությամբ կայաններ:

Բնական գազի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2021-2024թթ. ընթացքում բնական գազի ներկրման ծավալները էականորեն չեն փոխվել, թեև արևային էներգետիկայի ընդհանուր հզորությունը արդեն իսկ գերազանցում է 700 ՄՎտ:

¹³ <https://src.am/am/getNews/705>

